



Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2 (63)

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2023

**ԴԵԼԻՆԿՎԵՆՏ ԵՎ ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔ ՈՒՆԵՑՈՂ
ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՍԵԴԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Համառոտագիր

Սոցիալ-տնտեսական, մշակութային, հոգեբանական տարաբնույթ գործոնների փոխներգործությամբ պայմանավորված արդի հասարակության մեջ, դեռահասների շրջանում տարածված են դելինկվենտ և ադդիկտիվ տիպի վարքային շեղումներ, որոնք կարող են համատեղ կազմալուծող դրսևորում ունենալ՝ հանդիսանալով դեռահասի հոգեկան, ֆիզիկական, սոցիալական և բարոյական զարգացման գործում: Սույն հոդվածում փորձ է արվում փորձարարական ճանապարհով բացահայտել և ուրվագծել դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող հայ դեռահասների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, մշակել դելինկվենտ և ադդիկտիվ վարքի կանխարգելման հետ կապված գործնական առաջարկներ:

Հիմնաբառեր՝ *դելինկվենտ վարք, դեռահաս, ադդիկտիվ վարք, բնավորության շեշտվածություն, արժեքային կողմնորոշում, փազնապայանության մակարդակ*

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Բազմաթիվ քրեահոգեբաններ այն համոզման են, որ անչափահաս տարիքում ձեռք բերված ասոցիալ փորձը հոգեբանական նախապայման է հասուն տարիքում կայուն հակասոցիալական ուղղվածության ձևավորման համար:

Այս տեսանկյունից դեռահասների դելինկվենտ և ադդիկտիվ վարքի ձևավորման սոցիալ-հոգեբանական գործոնների ամբողջությունը բավականին լայն է ու բազմաբարդ, ուստի դրանց ուսումնասիրությունը և կանխարգելիչ ու շտկողական աշխատանքների իրականացումը հանդիսանում է գերակա հիմնախնդիր հոգեպես և ֆիզիկապես առողջ հասարակության ձևավորման և կայացման համար:

Դեռահասների անհատական հոգեբանական առանձնահատկությունները, զուգորդվելով սոցիալական անբարենպաստ պայմանների հետ, նպաստում են դևիանտ վարքի ձևավորմանը:

Ենթադրվում է, որ դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների մոտ առկա են դևիանտ վարքի ձևավորման սոցիալ-հոգեբանական էական առանձնահատկություններ:

Հետազոտության գործնական նշանակությունը

Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրում շուրջ մեկամսյա պրակտիկայի ընթացքում իրականացված հետազոտությունից ստացված տվյալները կարող են օգտակար լինել թե՛ դպրոցներում՝ մասնավորապես հատուկ կրթահամալիրում աշխատող մանկավարժական անձնակազմին, թե՛ դեռահասների ծնողներին՝ պատկերացում կազմելու վարքային դևիացիաների պատճառականության, ձևավորման գործոնների և կանխարգելիչ աշխատանքների իրականացման կարևորության մասին:

Հետազոտության նպատակը դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունն է:

Հետազոտության խնդիրները՝

1. վերլուծել հիմնահարցի վերաբերյալ մասնագիտական գրականություն,
2. բացահայտել դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների բնավորության շեշտվածության առանձնահատկությունները,
3. բացահայտել նրանց արժեքային կողմնորոշումների բնույթը,
4. ուսումնասիրել նրանց միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները,
5. ուսումնասիրել ընտանիքում տազնապայնության դրսևորման մակարդակը,
6. մշակել դեռահասների շրջանում դելինկվենտ և ադդիկտիվ վարքի կանխարգելման հետ կապված գործնական առաջարկներ:

Հետազոտության մեթոդները

Հետազոտությունն իրականացվել է էմպիրիկ մեթոդների՝ հարցաթերթիկի, թեստի և անկետավորման միջոցով:

Հետազոտությանը մասնակցել են Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրի 12-16տ. 30՝ 15 դելինկվենտ և 15 ադդիկտիվ վարք ունեցող աշակերտ:

Դեռահասների դևիանտ վարքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բնութագիրը

Դեռահասի հոգեկան գործունեությունը առանձնանում է դինամիզմով, ինչը նրան ընկալունակ է դարձնում ինչպես դրական, այնպես էլ բացասական սոցիալական ներգործությունների նկատմամբ: Կենսաբանա-հոգեբանական տեսանկյունից ամենաբարդն ու դժվարը դեռահասության տարիքային շրջանն է, քանի որ 12-16 տարեկանը արդեն երեխա չէ, նա չափահաս էլ չէ: Այս տարիքն անվանում են «սոցիալական

իմպրինտինգի» տարիք, որը հատկանշվում է բարձր տպավորվողականությամբ այն ամենի նկատմամբ, ինչը հասուն է դարձնում մարդուն (Արզումանյան, 2004, էջ 198):

Արտասահմանյան քրեաբանության մեջ իրավախախտ դեռահասների վարքը անվանում են *դելինկվենտ* վարք: Այն ոչ էական իրավախախտումների, սխալ արարքների համակարգ է և դեֆինտ վարքի տարատեսակ է (Արզումանյան, 2004, էջ 200):

Վ. Ն. Կուդրյավցեվը կարծում է, որ սովորաբար քրեական վարքն սկսվում է վատ սովորելու, դպրոցից օտարման պատճառով: Այնուհետև սկսվում է ընտանիքից օտարումը՝ ընտանեկան խնդիրների և «ոչ մանկավարժական» դաստիարակչական մեթոդների կիրառման հետրանքով: Դեռահասն իր անձի սոցիալական չհարմարման, բնավորության շեշտվածությունների, ներքին մենակության ու անօգնականության ֆոնի վրա ներգրավվում է հանցագործ խմբում, որտեղ նրան ընդունում են (Кудрявцев, 1998, с. 33-34):

Ալենհայտ է, որ դելինկվենտ վարքն ունի մի շարք դրդապատճառներ: Անգիտակից շարժառիթները բացահայտող հոգեվերլուծական հետազոտություններում դելինկվենտությունը համարվում է ներքին կոնֆլիկտի և պարզունակ պաշտպանության հետևանք: Հակասոցիալական վարքի դեպքում կարող են գործել դելինկվենտության հետևյալ անգիտակից շարժառիթները՝ անհապաղ բավարարվածություն պահանջող ցանկություններ, անհանգստության, հուսահատության ներքին վերապրում, որն ագրեսիայի տեսք ընդունելով լիցքաթափման կարիք է ունենում, վիրավորանք, որը պահանջում է վրեժխնդրություն, նախանձ՝ ուղղված արդարության վերականգնմանը, մեծության և ամենազորության ֆանտազիա (Копыт, 1980, с. 35):

Դեռահասների դելինկվենտ վարքի հոգեբանական, սուբյեկտիվ գործոններ են հանդիսանում հետևյալ հոգեկան նորագոյացությունները՝ անհավասարակշռվածությունը, ագրեսիվությունը, կոնֆլիկտայնությունը, տագնապայնությունը, ինքնուրույնության ձգտումը, հուզական անկայունությունը, իմպուլսիվ վարքը, ռեֆերենտ խմբում հեղինակավոր դիրք գրավելու ձգտումը, բարոյագիտակցության և իրավագիտակցության ցածր մակարդակը:

Դելինկվենտ վարք ունեցող դեռահասների մեծ մասը՝ թե՛ տղաները, թե՛ աղջիկները, բացասական վերաբերմունք ունեն դպրոցի և դասընկերների նկատմամբ: Նրանց բնորոշ է սոցիալական համընդհանուր ընդունելի կանոններից օտարումը, դրական սոցիալական արժեքների մերժումը: Նրանց համար դժվար չէ հարվածել անձանոթին, սեփական նպատակին հասնելու համար ուրիշին գույքային վնաս հասցնել և այլն (Кох, 1988, с. 68):

Դևիանտ վարքի տեսակներից մեկը *ադդիկտիվ* տիպն է: Այս վարքն իրենից ենթադրում է հեռացում իրականությունից՝ հոգեվիճակի արհեստական փոփոխման ճանապարհով, որի արդյունքում անձը կենտրոնանում է կոնկրետ տեսակի գործունեության վրա՝ նպատակ ունենալով պահպանել ինտենսիվ հույզերը:

Դեռահասների ադդիկտիվ վարքի առավել տարածված տեսակներից մեկը ծխելն է: Ծխախոտ ծխելը դեռահասների մոտ դյուրագրգռվածության և անհանդուրժողականության ավելի մեծ ալիք է առաջացնում, ծխող դեռահասները ունեն հիշողության և ուշադրության ցածր մակարդակ, ինչպես նաև ցածր առաջադիմություն դպրոցում: (Максимова, 2000, с. 144):

Դեռահասների ադդիկտիվ վարքի ևս մի տարածված տեսակ է ալկոհոլիզմը: Ալկոհոլը նույնպես երեխաների մոտ զուգորդվում է քաղցր արգելված պտղի հետ, բայց շատ քչերին է, որ սպիրտային խմիչքները առաջին իսկ պահից դուր են գալիս: Դեռահասության տարիքին բնորոշ է նաև «խմել ցավը», այսինքն՝ ալկոհոլ օգտագործել ցավալի զգացողություններից ազատվելու համար, օրինակ՝ առաջին դժբախտ սիրո զգացումից (Копыт, 1980, с. 25):

Թմրամոլությունը ևս դեռահասների ադդիկտիվ վարքի ձև է: Ծանր թմրադեղերը շատ ուժեղ կախվածություն են առաջացնում և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական առումով, դեռահասը դադարում է վերահսկել իր գործողությունները և, շատ դեպքերում, սկսում է հանցավոր արարքներ կատարել, որպեսզի վճարի թմրամիջոցների ձեռք բերման համար անհրաժեշտ գումարը (Березин, 2000, с. 212):

Բացի քիմիական կախվածությունից արդի ժամանակներում ամենատարածվածը ինտերնետային կախվածությունն է: Բնութագրական են դպրոցական առաջադիմության կտրուկ անկումը, բոլոր այլ հորքիներում հետաքրքրության կորուստը: Այդպիսի դեռահասները դառնում են ավելի ներամփոփ և սկսում են գերադասել սոցիալական ցանցերում հաղորդակցումը՝ իրական ընկերների և ծանոթների հետ հաղորդակցվելու փոխարեն (Ялтонский, 1991, с. 41- 43):

Թերարժեք ընտանիքում դաստիարակված լինելը զգալիորեն մեծացնում է դեռահասների ադդիկտիվ վարքագծի ձևավորման ռիսկը: Ոչ լրիվ ընտանիքները, հաճախակի կոնֆլիկտները, խորթ մոր/հոր առկայությունը, ընտանիքում առկա սթրեսային իրավիճակները այն գործոններն են, որոնք դեռահասության շրջանում ազդում են հակումների ձևավորման վրա (Менделевич, 2005, с. 79):

Դեռահասների ադդիկտիվ վարքագծի ձևավորման սոցիալական գործոն կարող են լինել հասակակիցների հետ վատ փոխհարաբերությունները: Դեռահասները մեծ նշանակություն են տալիս

հաղորդակցությանը, և եթե այդտեղ առկա են խաթարումներ, որոնք առաջացնում են անհանգստություն, ապա մեծ հավանականություն կա, որ դեռահասին անհրաժեշտ կլինի ինչ-որ կերպ փոխհատուցել իր բացասական զգացմունքները: Յաճախ ինքնագնահատականը կամ հաճախակի դեպրեսիվ վիճակները դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորման գործոն են: Երբ դեռահասի համար անտանելի է դառնում բացասական հույզերի ամբողջ շարքը, նա սկսում է փնտրել իրականությունից փախչելու ուղի, որն իր համար առավել հարմարավետ կդառնա և կհանգեցնի առավել քիչ սթրեսային իրավիճակների (Короленко, 2012, с. 308):

Դեռահասների դևիանտ վարքի կանխարգելման միջոցառումների առանձնահատկությունները

Դեռահասների հանցավորության սոցիալ-հոգեբանական վաղ կանխարգելման հիմնահարցը շարունակում է մնալ հրատապ և պահանջում է համալիր միջոցառումների պետական ծրագրի մշակում և ներդրում: Երեխաների շեղվող վարքի կանխարգելման գործում առաջինն ընտանիքի դերի բարձրացումն է: Այս ուղղության իրականացումը պահանջում է արտաընտանեկան և ներընտանեկան բազմաթիվ խնդիրների լուծում: Հաջորդը՝ ընտանեկան դաստիարակության սխալների կանխարգելումն է: Առավել բնորոշ սխալների շարքին կարելի է դասել ծնողների հակամանկավարժական վարքագիծը որպես ընդօրինակման օբյեկտ, ծնողների և երեխաների միջև հոգևոր կապի կորուստը:

Կարևոր է երեխայի մոտ կայուն բարոյական դիրքորոշման ձևավորումը, վաղ մանկությունից կամային հատկությունների և սեփական արժանապատվության զգացման դաստիարակությունը: Հաջորդը՝ երեխայի նկատմամբ բռնություն թույլ չտալն է, որը ճնշում է նրա կամքը, կամ, ընդհակառակը, ձևավորում է ուժի պաշտամունք, խթանում է ագրեսիվության դաստիարակումը թույլերի նկատմամբ: Անհրաժեշտ է երեխաներին վաղ հասակից աստիճանաբար բացատրել ակոհոլի և թմրանյութերի կործանարար դերի մասին: Առավել գործուն միջոց են ծնողների, ավագ եղբայրների, քույրերի, ընկերների դրական օրինակները (Եսայան, 2009, էջ 65-66):


Հետազոտական աշխարանքի իրականացումը և արդյունքների վերլուծությունը

Հետազոտությունն իրականացվել է առաջադրված խնդիրներին համապատասխան մեթոդիկաների կիրառմամբ:

Դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների *բնավորության շեշտվածության* ուսումնասիրման նպատակով նրանց հետ

կիրառել ենք Լեոնհարդ-Շմիշելի բնավորության շեշտվածության ուսումնասիրության մեթոդիկան:


Ըստ Լեոնհարդ-Շմիշելի բնավորության շեշտվածության ուսումնասիրության մեթոդիկայից ստացված արդյունքների՝ դելինկվենտ վարքով դեռահասների 80 %-ի մոտ առավել շեշտված է բնավորության հիպերտիմ տիպը, 66,6 %-ի մոտ՝ էմոտիվ, 60%-ի մոտ՝ տագնապային, իսկ 53.3 %-ի մոտ՝ ցիկլոտիմ տիպերը, իսկ ադդիկտիվ վարք ունեցող դեռահասներից 73.3 %-ի մոտ՝ պարանոյալ, 66.6 %-ի մոտ՝ բռնկուն և էկզալտ տիպերը, բնավորության ցուցադրական տիպի շեշտվածությունը վառ էր արտահայտված դելինկվենտ վարք ունեցող դեռահասների 73.3 %-ի և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների 66.6 %-ի մոտ: Դիստիմ տիպի շեշտվածության աստիճանը թույլ է բոլոր հարցվածների շրջանում՝ 13.3 % յուրաքանչյուր խմբում, ռիզիկոությունը 20% արտահայտվածություն ուներ ադդիկտիվ վարքով դեռահասների շրջանում (Տես՝ Հիստոգրամ 1):



Հիստոգրամ 1. Լեոնհարդ-Շմիշելի բնավորության շեշտվածության ուսումնասիրության մեթոդիկայից ստացված արդյունքներ

Այսպիսով, դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասներն ունեն բնավորության շեշտվածության տարբերություններ: Դելինկվենտ վարքով դեռահասների մոտ շեշտված են հիպերտիմ, ցուցադրական և էմոտիվ տիպերը: Հասակակիցների խմբերում նրանք ձգտում են լիդերության: Ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ շեշտված են պարանոյալ, բռնկուն և հուզավառ տիպերը: Նրանք հիմնականում պարփակված են, մտքերի մեջ խորասուզված: Ադդիկտիվ վարքը մեծամասամբ օգտագործում են որպես միջոց հասակակիցների հետ շփումները հեշտացնելու և ճանաչման հասնելու համար:

Դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների արժեքային կողմնորոշումների բնույթը բացահայտելու նպատակով կիրառել ենք Մ. Ռոկիչի արժեքային կողմնորոշումների բացահայտման մեթոդիկան, որի նպատակն էր ուսումնասիրել անձի ուղղվածությունը և որոշել նրա դիրքորոշումը շրջապատի, մարդկանց, ինքն իր, աշխարհի հանդեպ, գործողությունների դրդապատճառները և կյանքի փիլիսոփայությունը:




Խստագրամ 2. Առաջնային տերմինալ արժեքները՝ ըստ Մ. Ռոկիչի արժեքային կողմնորոշումների բացահայտման մեթոդիկայի

Ըստ Մ. Ռոկիչի արժեքային կողմնորոշումների բացահայտման մեթոդիկայից ստացված արդյունքների՝ դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասներն ունեն արժեքային համակարգի տարբեր կողմնորոշումներ: Օր.՝ դելինկվենտ վարք ունեցող դեռահասների արժեքային համակարգում 66.6 %-ի մոտ *տերմինալ* արժեքներից առաջնային են նյութապես ապահովված կյանքը, 20 %-ի մոտ՝ երջանիկ ընտանեկան կյանքը և սերը, 13.3 %-ի մոտ՝ առողջությունը, իսկ այլոց երջանկությունը, հետաքրքիր աշխատանքը որպես արժեքներ ունեն ցածր արտահայտվածություն հարցվածների 80%-ի մոտ: Ի հակադրություն ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների՝ արժեքային համակարգում տերմինալ արժեքներից նյութապես ապահովված կյանքը ունի 20%, իսկ առողջությունը՝ 26.6% արտահայտվածություն, ադդիկտիվ վարքով դեռահասների 53.3%-ի արժեքային համակարգում երջանիկ ընտանեկան կյանքն ու սերը առաջնային արժեքներ են (Տես՝ Հիստոգրամ 2):

Ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների 53.3%-ի մոտ *ինստրումենտալ* արժեքներից դաստիարակվածությունը և կարգապահությունը առաջնային արժեքներ են, ի հակադրություն, դելինկվենտ վարք ունեցող դեռահասների 80%-ի շրջանում դրանք գտնվում են վերջին դիրքերում: Դելինկվենտ վարքով դեռահասների

33.3 %-ի մոտ ռացիոնալիզմը առաջնային արժեք է, իսկ ադդիկտիվ վարքով դեռահասների շրջանում նշված արժեքը առաջնային է 20%-ի շրջանում:



Հիստոգրամ 3. Առաջնային ինստրումենտալ արժեքները՝ ըստ Մ. Ռոկիչի արժեքային կողմնորոշումների բացահայտման մեթոդիկայի

Հանդուրժողականությունը, կրթվածությունը դեյինկվենտ վարք ունեցող դեռահասների 93.3%-ի շրջանում ոչ առաջնային արժեքներ են, իսկ ադդիկտիվ վարքով դեռահասների շրջանում առաջնային են 26.6%-ի մոտ: Դեյինկվենտ վարքով դեռահասների 40%-ի շրջանում առաջնային է հաստատականությունը, 26.6%-ի շրջանում՝ անկախությունը, իսկ ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների 93.3 %-ի շրջանում այս արժեքները գրավում են ոչ առաջնային դիրքեր (Տես՝ Հիստոգրամ 3):


Այսպիսով, դեյինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասներն ունեն արժեքային կողմնորոշումների արտահայտված տարբերություններ: Ակնառու էր, որ թե՛ դեյինկվենտ, թե՛ ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների մոտ տերմինալ արժեքներից ինքնազարգացման, ստեղծագործականության, բնության և արվեստի գեղեցկության ընկալման արժեքները գրավում էին ոչ առաջնային դիրք: Ինստրումենտալ արժեքներից մերժված էին նրբազգացությունը, հոգատարությունը, ազնվությունը և պատասխանատվության զգացումը, որը ևս մատնանշում է նրանց անձի զարգացման հակասոցիալական ուղղվածությունը:

Թ. Լիրիի միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկան նախատեսված է իր մասին սուբյեկտի պատկերացման, իդեալական Ես-ի և փոքր խմբերում փոխհարաբերությունների ուսումնասիրության համար: Ըստ Թ. Լիրիի՝ միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկայից ստացված արդյունքների՝ դելինկվենտ վարք ունեցող դեռահասների 46.6 %-ի մոտ գերակայում էր ավտորիտար տիպը՝ բարձր շեշտվածությամբ: Նրանք գերիշխող են, էներգիայով լի, իրենց նկատմամբ հարգանք են պահանջում:

Դելինկվենտ վարքով դեռահասների 33.3%-ի մոտ միջանձնային հարաբերություններում ագրեսիվության դրսևորման ցուցանիշը բարձր էր, իսկ ադդիկտիվ վարքով դեռահասների 13.3 %-ի մոտ դրսևորվում էր ագրեսիվության միջին մակարդակ: Դելինկվենտ վարքով դեռահասների 20 %-ի մոտ առկա են եսասիրական գծեր, իրենց վրա կենտրոնացած են, մրցակցության հակվածություն ունեն:

Միջանձնային հարաբերություններում կասկածամտությունը բնորոշ էր ադդիկտիվ վարքի միջին մակարդակով դեռահասների 33.3 %-ին, որի պատճառով դժվարությամբ են մտնում միջանձնային կապերի մեջ, նեգատիվիզմն արտահայտում են խոսքային ագրեսիայով: Ենթարկվող տիպի միջին մակարդակի արտահայտվածություն առկա էր ադդիկտիվ վարքով դեռահասների 20%-ի մոտ: Կախյալության միջին մակարդակի արտահայտվածություն առկա էր ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների 33.3%-ի մոտ (Տես՝ Հիստոգրամ 4):

Այսպիսով, Լիրիի միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկայի միջոցով հնարավոր դարձավ ուսումնասիրել և միաժամանակ ակնառու կերպով ցույց տալ դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների միջանձնային հարաբերություններում դրսևորվող տիպերի առանձնահատկությունները:




Հիստոգրամ 4. Թ. Լիրիի միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկայից ստացված տվյալներ

Ընտանիքում տազնապայնության վերլուծության էյդեմիլլեր-Յուստիցկիսի հարցարանը հնարավորություն է ընձեռում ախտորոշել ընդհանուր տազնապայնության աստիճանն ընտանիքում, որն իրենից ներկայացնում է մեղքի զգացման, տազնապայնության և լարվածության հանրագումարը:

Ըստ ընտանիքում տազնապայնության վերլուծության էյդեմիլլեր-Յուստիցկիսի հարցարանից ստացված արդյունքների՝ հարցվածների 80 %-ը՝ մասնավորապես դելինկվենտ վարք ունեցող դեռահասների 86.6 %-ը և աղդիկտիվ վարք ունեցող դեռահասների 73.3 %-ը ունի ընտանեկան տազնապայնության բարձր մակարդակ, որն արտահայտվում է մեղքի զգացման, տազնապայնության և լարվածության հանրագումարով (Տես՝ Հիստոգրամ 5):

Դելինկվենտ վարք ունեցող դեռահասների մոտ առավել արտահայտված էր մեղքի զգացման ենթասանդղակը, ըստ որի նրանց մոտ դրսևորվում էր ոչ ադեկվատ պատասխանատվության զգացում բացասական այն բոլոր երևույթների հանդեպ, ինչ տեղի է ունենում ընտանիքում: Օր.՝ հետևյալ պնդումները նրանց մեծամասնության կողմից դրական պատասխանի էին արժանանում՝ «Հաճախ զգում եմ ընտանիքիս անդամների քննադատական հայացքը ինձ վրա» կամ «Իմ ընտանիքի որոշ անդամների մոտ իմ պատճառով անհարմար վիճակ է լինում ընկերների ու բարեկամների շրջանում»:



Հիստոգրամ 5. Ընտանիքում տազնապայանության վերլուծության էյդեմիլլեր-Յուստիցկիսի հարցարանից ստացված արդյունքներ

Աղդիկտիվ վարք ունեցող դեռահասների մոտ առավել արտահայտված էր *լարվածության* ենթասանդղակը՝ զգացողություն, որ ընտանեկան պարտականությունների կատարումն իրենցից պահանջում է իրենց ուժերից վեր մի բան: Օր.՝ նրանց մեծամասնության կողմից առավել հաճախ դրական պատասխանի էին արժանանում հետևյալ պնդումները՝ «Տանը ինձ միշտ պետք է զսպեն» կամ «Մեզ մոտ ինձ շատ բաներ դուր չի գալիս, բայց ես փորձում եմ ցույց չտալ»:

Այս պատասխաններում ակնառու երևում է ընտանիքում տազնապայանության դրսևորման առանձնահատկությունները: Մի դեպքում դեռահասները իրենց վարքով պայմանավորված արժանանում են բացահայտ քննադատական վերաբերմունքի, մյուս դեպքում՝ ընտանեկան փոխհարաբերություններում առկա է թաքնված *լարվածություն*, ինչը հանգեցնում է նյարդայնության, անհանգստության, հույզերի չարտահայտման, որն էլ մեր կարծիքով նպաստում է նրան, որ դեռահասը փորձում է արհեստականորեն փոփոխել իր հոգեվիճակը աղդիկտիվ վարքային դրսևորմամբ:

Այսպիսով, մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքներով հաստատվում է մեր կողմից առաջադրված վարկածը, որ դեփինկվենտ և աղդիկտիվ վարք ունեցող դեռահասների մոտ առկա են դևիանտ վարքի ձևավորման սոցիալ-հոգեբանական էական առանձնահատկություններ: Ուստի ընտանիքը և դպրոցը՝ հանդիսանալով դեռահասի առաջնային սոցիալականացման օղակներ, պետք է նպաստեն դեռահասի արժեքային համակարգի սոցիալ-դրական կողմնորոշման ձևավորմանը, ընտանեկան առողջ մթնոլորտի

ձևավորմանը, որոնք էլ կարող են հիմք հանդիսանալ դեռահասի հոգեկանի ներդաշնակ զարգացման, բնավորության գծերի, միջանձնային հարաբերություններում դրսևորվող տիպերի փոփոխման, և ի վերջո՝ դելինկվենտ և ադդիկտիվ տիպի վարքային դևիացիաների կանխարգելման համար:

Եզրակացություն

Այսպիսով, մասնագիտական գրականության և մեր կողմից կատարված հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ՝

➤ Դեռահասների դելինկվենտ վարքը իրենից ենթադրում է քրեական օրենսգրքի տեսանկյունից ուղղակիորեն ոչ դատապարտելի իրավախախտումների ամբողջություն, իսկ ադդիկտիվ վարքը բնութագրվում է որպես մեկ կամ մի քանի հոգեակտիվ նյութերի չարաշահում: Թե՛ դելինկվենտ, թե՛ ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների անձնային հատկանիշները (կոնֆլիկտայնություն, տագնապայնություն, արժեքային համակարգի չձևավորվածություն, բնավորության շեշտվածություններ և այլն) փոխներգործում են սոցիալական անբարենպաստ գործոնների հետ:

➤ Դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասներն ունեն բնավորության շեշտվածության ակնառու տարբերություններ:

➤ Արժեքային համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև նրանց արժեհամակարգի ընդգծված տարբերությունները:

➤ Միջանձնային հարաբերություններում դրսևորվող տիպերը ևս տարբեր են դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների շրջանում:

➤ Դելինկվենտ և ադդիկտիվ վարք ունեցող դեռահասների ընտանիքներում առկա են տագնապայնության դրսևորման առանձնահատկություններ:

Առաջարկում ենք՝

➤ **Դեռահասների հետ աշխատող մանկավարժական անձնակազմին.**

1. Հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի հոգեբանական առանձնահատկությունները, ընտանեկան բարենպաստության մակարդակը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ ցուցաբերել անհատական մոտեցում:

2. Պարբերաբար ժողովներ կազմակերպել ծնողների մասնակցությամբ և տեղյակ պահել յուրաքանչյուր աշակերտի ընթացիկ առաջադիմության և վարքի վերաբերյալ, իրականացնել ծնողավարման հմտությունների զարգացման թրեյնինգներ:

3. Մանկավարժական աշխատանքը հենել ոչ թե ճնշում գործադրելու, այլ դեռահասի համար օգտակար գործունեության մեջ ներգրավման վրա, որտեղ դեռահասը կկարողանա բավարարել իր լիդերական ձգտումները: Դպրոցի ներսում ժամանակ առ ժամանակ կազմակերպել դեռահասների հետաքրքրություններին համապատասխան մրցույթ-միջոցառումներ:

➤ **Դեռահասների ծնողներին.**

1. Դեռահասների տարիքային և անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ բավարար ուշադրություն, խնամք և հոգատարություն ցուցաբերել նրա անձի, հետաքրքրությունների, ուսումնական առաջադիմության նկատմամբ:
2. Պարբերաբար զրուցել դեռահասի հետ, անհրաժեշտության դեպքում դիմել մասնագիտական հոգեբանական աջակցության:
3. Դեռահասների հետ այցելել մշակութային օջախներ, նպաստել նրանց արժեքային համակարգում համամարդկային արժեքների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը:
4. Սեփական վարքը ծառայեցնել որպես ընդօրինակման օբյեկտ՝ խուսափելով տարաբնույթ բացասական վարքային դրսևորումներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արզումանյան Ս., Գրին է., Իրավաբանական հոգեբանություն, Դասագիրք բուհերի համար, Երևան, Ջանգալ-97, 2004, 432 էջ:
2. Եսայան Ա. Սոցիալական ուսմունք, սոցիալական աշխատանք, Երևան, 2009, 84 էջ:
3. Березин С. В., Лисецкий К. С., Орешникова И. Б., Предупреждение подростковой и юношеской наркомании. М.: Изд-во Института Психотерапии, 2000, 256 с.
4. Кон И. С., Ребенок и общество. М., Наука, 1988, 250 с.
5. Копыт Н. Я., Муратова И. Д., Сидоров П.И., Скворцова Е.С., Причины и особенности алкоголизации в подростково-юношеском возрасте. М., 1980, 56 с.
6. Короленко Ц. П., Дмитриева Н. В., Аддиктология: настольная книга. М., 2012, 536 с.
7. Кудрявцев В. Н., Генезис преступления. Опыт криминологического моделирования: Уч. Пособие. М., 1998. с. 33-34.

8. Максимова Н. Ю., Психологическая профилактика алкоголизма и наркомании несовершеннолетних: Уч. Пособие. Ростов н/Д., 2000, 384 с.
9. Менделевич В. Д., Психология девиантного поведения. СПб.: Речь, 2005, 445 с.
10. Ялтонский В. М., Влияние наркотизации гашишем на акцентуации характера подростков с аддиктивным поведением и гашишной наркоманией. М., 1991, с. 41- 43.

REFERENCES

1. Arzowmanyán S., Grin e', Iravabanakan hōgebanowt'yown, Dasagirq bowheri hamar, Erevan, Zangak-97, 2004, 432 e': (In Armenian)
2. Esayan A. Socialakan owsmownq, socialakan ashxatanq, Erevan, 2009, 84 e': (In Armenian)
3. Berezin S. V., Liseckij K. S., Oreshnikova I. B., Preduprezhdenie podrostkovej i junosheskoj narkomanii. M.: Izd-vo Instituta Psihoterapii, 2000, 256 s. (In Russian)
4. Kon I. S., Rebenok i obshhestvo. M., Nauka, 1988, 250 s. (In Russian)
5. Kopyt N. Ja., Muratova I. D., Sidorov P.I., Skvorcova E.S., Prichiny i osobennosti alkogolizacii v podrostkovo-junosheskom vozraste. M., 1980, 56 s. (In Russian)
6. Korolenko C. P., Dmitrieva N. V., Addiktologija: nastol'naja kniga. M., 2012, 536 s. (In Russian)
7. Kudrjavcev V. N., Genезis prestuplenija. Opyt kriminologičeskogo modelirovanija: Uch. Posobie. M., 1998. s. 33-34. (In Russian)
8. Maksimova N. Ju., Psihologičeskaja profilaktika alkogolizma i narkomanii nesovershennoletnih: Uch. Posobie. Rostov n/D., 2000, 384 s. (In Russian)
9. Mendelevič V. D., Psihologija deviantnogo povedenija. SPb.: Rech', 2005, 445 s. (In Russian)
10. Jaltonskij V. M., Vlijanie narkotizacii gashishem na akcentuacii haraktera podrostkov s addiktivnym povedeniem i gashishnoj narkomaniej. M., 1991, s. 41- 43. (In Russian)

СЕДА АРАКЕЛЯН - СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОДРОСТКОВ С ДЕЛИНКВЕНТНЫМ И АДДИКТИВНЫМ ПОВЕДЕНИЕМ

Ключевые слова: *делинквентное поведение, подросток, аддиктивное поведение, акцентуация характера, ценностная ориентация, уровень тревожности*

В современном обществе вследствие взаимодействия различных социально-экономических, культурных, психологических факторов среди подростков широко распространены девиации поведения делинквентного и аддиктивного типа, которые могут проявляться совместно, являясь деструктивной основой психического, физического, социального и нравственного развития подростка. В данной статье предпринята попытка экспериментально выявить и очертить социально-психологические особенности армянских подростков с делинквентным и аддиктивным поведением, разработать практические предложения, связанные с профилактикой делинквентного и аддиктивного поведения.

SEDA ARAKELYAN - SOCIAL-PSYCHOLOGICAL PECULIARITIES OF ADOLESCENTS WITH DELINQUENT AND ADDICTIVE BEHAVIOR

Keywords: *delinquent behavior, adolescent, addictive behavior, character emphasis, value orientation, anxiety level*

In modern society, due to the interaction of various socio-economic, cultural, psychological factors, delinquent and addictive-type behavioral deviations are widespread among teenagers, which can be manifested together, being a destructive basis for the mental, physical, social and moral development of the teenager. In this article, an attempt is made to experimentally identify and outline the socio-psychological characteristics of Armenian teenagers with delinquent and addictive behavior, to develop practical proposals related to the prevention of delinquent and addictive behavior.

Ներկայացվել է՝ 10.04.2023 թ.
Գրախոսվել է՝ 26.04.2023 թ.